ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ապրիլի 2021 թվականի N 168-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԿԱՊԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014 թվականի հունիսի 13-ի N 98-Ն որոշմամբ հաստատված կարգը և «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2021թ. ապրիլի 13-ի «Մրցույթում հաղթող ճանաչելու մասին» N 4 որոշումը և եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Արմինե Հովհաննիսյանին 2021թ. ապրիլի 16-ից ազատել «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումից:

2. Հաշվի առնելով գիտամշակութային ոլորտում տասնհինգամյա աշխատանքային փորձը և կոլեկտիվի դրական կարծիքը՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար կայացած մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Քրիստինե Պետրոսյանին 2021թ. ապրիլի 16-ից նշանակել կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ մեկ տարի ժամկետով:

3. Կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Գանդալյան Մերի	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),
Ստեփանյան Թամար	Իրավաբանական բաժնի պետ
Համբարձումյան Մարի	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսա-տնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ,

Հովհաննիսյան Արմինե	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի նախկին տնօրենի պաշտոնակատար, հանձնող,
Պետրոսյան Քրիստինե	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն, ընդունող:

4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

16.04.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. ապրիլի 16
ք. Կապան